

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՊ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԼԵՆՈՒՄԸ

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՆԱԴՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օրերս տեղի ունեցավ Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հերթական պլենումը:

Պլենումը քննարկեց ՍՄԿՊ Կենտկոմի Հուլիսյան և Սեպտեմբերյան պլենումների որոշումների կատարման ընթացքը:

Պլենումը նշեց, որ Հայաստանի ԿՊ Կենտկոմի բյուրոն և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը չեն ապահովել ՍՄԿՊ Կենտկոմի Հուլիսյան ու Սեպտեմբերյան պլենումների որոշումների կատարումը, և Հայաստանի ԿՊ Կենտկոմի բյուրոյի աշխատանքը գտավ անբավարար:

Քննարկված հարցի մասին պլենումն ընդունեց ծավալուն որոշում:

Պլենումը ընկ. Գ. Ա. Հարությունյանին հանեց Հայաստանի ԿՊ Կենտկոմի առաջին քարտուղարի պոստից և Հայաստանի ԿՊ Կենտկոմի կազմից:

Հայաստանի ԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց ընկ. Ս. Հ. Թովմասյանը:

Պլենումը ընկ. Հ. Մ. Մարտիրոսյանին ազատեց Հայաստանի ԿՊ Կենտկոմի երկրորդ քարտուղարի պարտականություններից և ընկ. Բ. Ա. Գրիգորյանին՝ Հայաստանի ԿՊ Կենտկոմի քարտուղարի պարտականություններից:

Հայաստանի ԿՊ Կենտկոմի երկրորդ քարտուղար ընտրվեց ընկ. Հ. Խ. Մարգարյանը: Հայաստանի ԿՊ Կենտկոմի քարտուղար ընտրվեց ընկ. Յա. Ն. Զարոբյանը:

Պլենումը Հայաստանի ԿՊ Կենտկոմի բյուրոյի անդամներ ընտրեց ընկ. ընկ. Ս. Հ. Թովմասյանին, Հ. Խ. Մարգարյանին, Յա. Ն. Զարոբյանին, Ա. Ե. Քոչինյանին, Մ. Պ. Պապյանին, Գ. Ի. Մարտիրոսովին, Պ. Վ. Պիսկունովին, Ա. Ա. Բունիաթյանին, Գ. Բ. Պետրոսյանին և Հայաստանի ԿՊ Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածուներ՝ ընկ. ընկ. Ս. Ա. Միֆայելյանին և Գ. Ա. Տեր-Ղազարյանցին:

Պլենումի աշխատանքներին մասնակցում էր ՍՄԿՊ Կենտկոմի քարտուղար ընկեր Պ. Ն. Պոսպելովը: